

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ՍՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիչը մեկ ծրարով

Տարեկան 14 ֆր.

Վեցամսեայ 7 ֆր.


ՍՄԵՐԻԱ

Տարեկան 2.60 Տօլ.

Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱՆԿԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՍԵՔ.



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԳԸ ՀՐԱՏՆՐԱԿՈՒԻ ՍՄԵՆ ՉՈՐԵՔԵՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ. Ս. Ս. ՏՆԻ

Redaction du Journal

«Ira v'ou n'k»

(Bulgarie) VARNA

РЕДАКЦИЯ

на ВѢСТНИКЪ

«Ира в'у н'к»

ВАРНА

Գրողները եւս չեն տրուիր

ՊՈՒԼԱՐԻԱ ՏԱԳՆԱՊԸ

Պուլկարիոյ արգի Սթանպուլովեան կառավարութիւնը յանուն ժողովուրդին և ի պատիւ իշխանին տօնեց փառաւոր եղանակաւ նորին Արքայական Բարձրութեան գահակալութեան քսանամեակը. խրախճանք, հանդէսներ և լուսավառութիւններ երկրին ամեն կողմը. նոյնպէս ազատարար ռուս բանակին նահատակներուն ի յիշատակ կանգնուած արձաններուն և կառուցուած յիշատակարաններուն պաշտօնական բացումին առթիւ կատարուած հանդիսաւորութիւնները՝ ռուս իշխաններու և զօրավարներու մասնակցութեամբ և ասոնց ընծայուած հանդիսաւոր ընդունելութիւնները ու խնձրեցները եկան անցան Պուլկարիոյ ժողովուրդին աչքին առջեւէն իբրեւ խաբուսիկ երեւոյթներ. երէկ անցան այդ ամէնը և այսօր ժողովուրդը կը մնայ մերկ իրականութեան առջեւ. Հանդէսները՝ ժողովուրդին փորը կշտացնելէ հետո՝ աւելի զգացնել տուին իր անօթութիւնը, իր տնտեսական տագնապը:

Երկիրը այս տարի իսկապէս զուրկ է հողային արգիւնքէ, Հողագործ ժողովուրդին մէկ կարեւոր մասը հազիւ իր ցանածին չափ ցորեն կրցաւ քաշել. շատ գաւառներ ուտեստի և սերմացուի կարօտ են. այսօր եթէ ունին, քանի մը ամիս յետոյ պիտի ստիպուին ուտելու համար ալիւր կտմ ցորեն գնել դուրսէն, վախառուէն եռապատիկ գներով. խիստ ստուար թուով գիւղացիներ ալ իրենց ձեռք բերած դոյզն արգիւնքը ստիպուած են այսօր ծախել տուրքի և Հողագործական Դրամատան պարտքը վճարելու համար, գիտնալով թէ քանի մը ամիս յետոյ պարտաւոր պիտի ըլլան այդ ծախածին աւելի բարձր գներով գնելու նոր փոխառութիւն կնքելով, որ սընականութեան կը տանի:

Այսու հանգերձ գիւղացիին վիճակը բոլորովին յուսահատական չէ. կառավարութիւնը փոքրիկ զոհողութեամբ մը կրնայ փրկել նիւթական անկումէ երկրին միակ արդիւնաբերող այդ տարրը. կառավարութեան կը սպասուի որ՝

- 1) Տուրքերու գանձումը յետաձգէ՝ գէթ միասուած գաւառակներու համար.
- 2) Հողագործական Դրամատանը նոր պայմանաժամ տայ իրեն պարտական գիւղացիներուն.
- 3) Ցորենի և ալիւրի արտածումը արգիլէ:

Կառավարութեան վարիչները որչափ որ ալ տեղեակ ըլլան ժողովուրդի նեղ վիճակին, այնչափ չեն զգար որչափ կը զգայ ըսն նեղուող ժողովուրդը. հետեւապէս ինք, ժողովուրդը, պէտք է որ իր ցաւին դարմանը ցոյց տայ և առաջարկէ կառավարութեան, Պուլկար կառավարութիւնը թէ և արգէն անտարբեր չէ ժողովուրդի ցաւերուն, բայց ժողովուրդը միաբերան իր ցաւերը արտայայտել գիտնալու է, որպէսզի դարմանը չը յապաղի և վիճակը աւելի չը ծանրանայ:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՃԱԿԸ

Վանէն օգոստոս 27ին «Մշակ»ի կը գրեն:

«Մեր գրողները օրէ օր կը վատանայ. Հայի գիրք թէեւ չէ՞ և չնչին չափով, բայց այս տարուան կայերն ու չեն խոստանար մեղմել ժողովրդի ծով թշուառութիւնը. Մեր այս թշուառութիւնը աւելի ընդհանուր եւ հեղհեղեղ աւելի սոսկալի կը դառնայ վարչութեան ստեղծած նորաւոր մեղմանութիւններով եւ սարսափներով:

Երկրի մասին տրուած միտքին կը կայանայ կարծես աւելի խոր եւ մնայուն ատելութեամբ՝ գրգռել հայ եւ թիւրք տարրեր իրարու դէմ եւ նոր զգաղութիւններու ու աւերածութեան աթիւններ հնարելու. Շատ անգամ գիշերը լրտեսներ ծագուած կը պտտին զանազան թաղեր, ով գիտէ ինչ սեւ դաւեր սարքելու համար, կը մըտնեն զօրանոցներ գինուորների տրամադրութիւնը եւ վերաբերմունքը ըրտեսելու համար, այնուհետեւ կը հար-

ցափորան թէ արդեօք վալիի արարքները հայերի վերաբերմամբ դուր եկած են անոնց համար. Արդեօք անոնց մէջ եւս պոյութիւն ունին թիւրք յեղափոխութեան նոր շարժումներու եւ զգաղութեան նշաններ, սաղմեր:

Ձերբակալութիւններ օրէ օր կը շատանան. Հարիւրաւոր անմեղներ կը մատուցին թիւրքական բանտ կոչուած սարսափի ջաւարանին. Բանտարկուած են նաեւ կտուց Անապատի երկու վարդապետներ իրենց անյայտ յանցանքի համար. Գննութիւն, փաստ գոյութիւն չունին արդարակոյտ Սուլթանի նոյնքան արդարակոյտ ներկայացուցիչ համար:

Ալի-Բէյը գնաց. Առժամանակեայ փոխ-կուսակալի պաշտօնը յանձնուած է Պաշալէի միւլ-Թէսարըֆին, որ ըստ երեւոյթին քարիւղի մէջ կերելու է:

Կամուար

ՆԵՐՈՍԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՊԲԵՐ

Շաբաթ օրուան ուղեմանական օրաթերթերը մանրամասնութեամբ պատմած են, որ Պուլկարի ոստիկանութիւնը կրցած է ի յայտ բերել հայ յեղափոխականներու մի նոր սարքած դաւադրութիւնը թիւրք կայսրութեան ապահովութեան դէմ:

Ահա, ասիկա եղբայրներ ինչպէս պատմած են լրագրողները:

«Ոստիկանութեանց տուած տեղեկութեանց վրայ, Պուլկարի ապահովութեան պետ Պր. Ռոմուլուս Վոյնէսքո հրամայեց Բաթրալ-Վոսա փողոցը քննող Եփրեմ Համբարեանին տունը կոխել եւ ձերբակալել զինքը իմացած ըլլալով որ անոր տունը կը բնակին դաւադիրները:

Թէ՛ տանը մէջ, եւ թէ՛ յիշեալ Համբարեանին մօտէն փողոցի թիւ 19 ունեցած խանութին մէջ եղած խուզարկութիւններէն գտնուեցան մեծ քանակութեամբ թղթակցութիւններ, ինչպէս եւ շատ մը քրտնալիւս բաղադրութիւններ եւ մասնաւոր գործիքներ պայթուցիկ ուժերի յինչու համար:

Ուրիշ վեց հայեր եւս բռնուեցան իբրեւ հայ քոմիթէի անդամներ ասոնք իր թէ մասնակից են եղեր Պուլկարի եղող հայերու մեծ ընկերութեան մը գլխաւոր կեդրոնին:

Ձերբակալուածներու մէջ կայ մէկը Պոյաճի Մկրտիչ անունով նոր եկած Պուլկարիայէն ի Պուլկար:

Հակառակ եղած քննութեանց, որմէ հաստատուեցաւ թէ այս Պոյաճի Մկր-

տիչ անուն անձը իր Պուլկարի գալէն ի վեր յաճախակի տեղակցութիւններ ունեցած է Համբարեանին հետ, երկուքն ալ յամառել եւ ուրացել են յայտնի ապացոյցները եւ պնդել են թէ իրար չեն ճանչնար:

Պ. Վոյնէսքո այս գործը տեղեկագրեց նախարարութեան, եւ հիմա ընդհանուր ապահովութեան պաշտօնատուներ մանրամասն քննութիւն մը կատարել սկսած է այս մարդկանց դերը որոշելու եւ իրենց արարքի ճիշդ հանգամանքը հասկնալու համար:

Վերջին պահուն Պուլկարի ստացուած նամակէ մը կը տեղեկանանք թէ 136 հոգիներ եւս կը փնտռուին:

Այս մասին ինչ նոր տեղեկութիւն որ առնենք, պիտի հաղորդենք մեր ընթերցողներուն:

ՄԵԾ ԳՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

ՌՈՒՍԻՈՅ ՄԸ:

Անձի ու ընչից ապահովութիւնը տակաւին անհնար եղաւ վերահաստատել Ռուսիոյ մէջ. միշտ սպաննութիւնք եւ աւաղակութիւնք կը շարունակեն ամեն կողմ:

Գողութիւն մը որուն նմանը գժուարաւ կը պատահի, տեղի ունեցաւ մի երկու շաբաթ առաջ խարքովէն Օտէսա բանոց գծին վրայ. ահա թէ ինչպէս:

Կալուածատէր հարստ կին մը Տիկ. Տօպրիւովա՝ խարքովէն կէս գիշերին մեկնող կառախուսքին մէջ առաջին կարգի քուրէ մը նստած էր մինակ. Երբ կառախուսքը ճամբայ ելաւ, Տիկ. Տօպրիւովա իր քուրէին դուռը բանալով գոցեց և օդը քիչ մը տաք ըլլալուն պատուհանը վար առաւ և պառկեցաւ քանդակէն վրայ:

Իր այլ և այլ պակասներէն շատ ձեռքի կաշիէ ճամբու չափ մը ունէր որուն մէջ մէկ միլիոն երկու հարիւր հազար ռուպլի արժողութեամբ զանազան աքսիոններ և թանկագին ազամանքներ կային: Տիկ. Տօպրիւովա քնացած ատեն իր շանթան բարձին տակը դրած ձեռքովը բռնած էր:

Իւր քուրէին մէջ յանկարծ պատուհանին կողմէն իրեն ձայն մ

եկածի պէս եղաւ. սակայն տեսնելով որ թուէն ազագորէն կընթանար, այնչափ կարեւորութիւն չը տուաւ լսածին:

Մէկէն ի մէկ սեւադէմ մարդ մը երեսը մուր քսած պատուհանէն ներս ցատկեց, Տկ Տօպրինովա չանթան ձեռքին մէջ սեղմելով ոտք ելաւ, սակայն երկիւղէն սառսափահար չի կարողացաւ դիմադրութիւն մը փորձել երբ մարդը ընկողմէն կուրծքին ուղղած ըսաւ. «Զըլլայ որ ձայն հանես, չ'ըլլայ որ շարժում մը ընես, թէ չէ մեռած են»:

Անծանօթը ձեռքէն խլեց չանթան և ինչպէս որ եկեր էր դուրս ելաւ պատուհանէն:

Երբ խելքը գլուխն եկաւ Տկ Տօպրինովա զանգաղը քաշեց, թընէն կայնեցաւ, բայց ոչ մի կողմ գողը չգտնուեցաւ, որ հաւանականաբար թրէնը կայնելու համար գնացը ծանրացած ատեն գետին ցատկեր անյայտացեր էր գիշերուան մութով:

Ամեն կողմ հեռագրով իմաց տրուեցաւ, բայց տակաւին գողը չը դառնուեցաւ:

ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ո՛վ չգիտէր թէ այսօր Պուլկարիոյ մէջ Ուսուցչական Միութիւն մը ունենալ, որը հիմնուած է մէկ տարի առաջ իւր թէ Պուլկարահայ կրթական գործը բարեփոխելու համար: Ո՛վ չգիտէր թէ այս Միութիւնը վրիպած է իւր նպատակէն ու փոխանակ կրթական գործը բարեփոխելու անոր յետադիմութեան պատճառ կը դառնայ, ամուր կերպով փարելով միայն իւր նիւթական շահերուն: Այս Միութիւնը ահա բոլոր թըրքաւորներուն նման պզտիկ թըրքաւոր մը կը ներկայացնէ հիմա, այն տարբերութեամբ որ, մինչդեռ Ամերիկեան թըրքաւոր մը իւր ամուր

դիրքն ու յենակէտը ունի, Միութիւնը չունի ոտքը կոխելիք ունի թոյլ կէտ մը, բացի գործաթողէն եւ վարձատրանները առանց ուսուցչի ձգելէն ի սէր ազգին զաւակներուն, որոնց անունով հրապարակ ելած ու կազմակերպուած է:

Հարկ է ըսել թէ մենք բաւական մօտէն ծանօթ ենք Միութեան նպատակին ու զայն առաջնորդող գլխաւոր գաղափարներուն, գաղափարներ, որոնք երբեք չպիտի իրագործուին քանի որ Ուսուցչական Միութիւնը ոչ ազգային իշխանութիւնէ մը եւ ոչ ալ Պուլկար կառավարութիւնէն վաւերացուած է, ուստի չունի ոչ մէկ օրինական հանդամանք: Անոր նպատակներէն են, ուսուցչական ասպարէզը մաքրել ամէն կերպով անկարող ուսուցչներէ, միջոցներ հայթայթել ուսուցչներու ինքնազարգացման համար, միջոց ընտրելով մանկավարժական թերթի մը հրատարակումը, կոուրի հոգաբարձութիւններու, թաղականութիւններու ղեմ նիւթական վիճակը բարեփոխելու եւ ուսուցչներուն եղած աննպաստ առաջարկութիւնները մերժելու համար, պոյթոս ընել Միութեան անդամ չեզոք ուսուցչներուն ղեմ եւ ուրիշ քանի մը անկարեւոր բաներ, որոնց վրայ ծանրանալը չարժեք:

Տեսնենք թէ անկարող ուսուցչները ուսուցչական ասպարէզէն հեռացնելու հարցը ինչպէս գործադրուած եւ ինչ արգիւնք տուած է:

Ով է այն որ ուսուցչներուն կարողութիւնը քննելու իրաւունք ունի, Ուսուցչական Միութեան չվերաբերող հարց մըն է այս արգէն ինքնին: Կը հարցնենք թէ ինչ օրինական ոյժի վերայ հիմնուած այսինչ անկարող ուսուցչի կարելի է հեռացնել, Ամենաիրական փաստը թէ Միութիւնը կողորդող պատուիրէն չափ ալ պոռայ անոր մտիկ ընող չպիտի ըլլայ, բացի ինքնաձեռնարկէն, այն է որ Պուլկարի հոգաբարձութիւնը նախկին ապուխտ ծախող մը պաշտօնի կոչած է (ինչորք մարդուն ինչ ըլլալուն վրայ չէ, կըրնայ շատ աւելի կարող ըլլալ քան Միութեան շահամուր ուսուցչի մը): Եւ ան փաստ մը որ դառ մը կրնայ ըլլալ անապարձ ուսուցչներուն. նախ անոր համար որ Միութիւնը անտես ստեղծուած է, երկրորդ անոր համար որ նախկին

ապուխտափառներն վրայ աւելի հաւատարմութիւն են եւ. կամ լաւ համարած են ունի մէկը ուսուցչի կարգելը քան թէ Ուսուցչական Միութեան անտեղի պահանջներուն գոհացում տալ: Կը հետեւի թէ հոգաբարձութիւնը առանց նկատի առնելու ունի Ուսուցչական Միութիւնը բազարակ անկարողութեան մէջ կը գտնուի հոգաբարձութեան արգիւնքը ընտրութեանց մէջ: Ո՛ր միայն ուրիշ անկարող ուսուցչները հեռացնելու խնդիրը:

Մենք այնպէս համոզուած ենք որ Միութիւնը առժամանակեայ ոյժ մը եղաւ կարգ մը ուսուցչներու համար: Ուսուցչներն ու ուսուցչուհիներ, որոնք տակաւ կը քուլէին այս ասպարէզէն, եւ մարդիկ, որոնք ուսուցչի ըլլալ կուզէին, ոյժի մը կը թնայ, զուրկ անձնական արժանիքներէ, փարեցան Միութեան, Միութեան մը, որ այսպիսիներուն ղեմ ալ պիտի կոուլէր, իբրեւ վնասակար տարրերու:

Չարմանալի չէ ուրիշներ երբ երէկուան անպէտք պիտանի կը հոչակուի այսօր եւ անարժանք արժանաւոր: Չարմանալի չէ նաեւ երբ Տօպրի, Շուրա եւ Պուլկար կը փնտրեն Միութեան չպատկանող ուսուցչներ: Ու հագիւ ծլած Ուսուցչական Միութեան ղեմ սկսած է ռեակցիա մը, որը կը յայտնուի բերնէ բերան եւ մամուլի մէջ: Ուրիշ ինչ կերպ կրնայ ըլլալ քանի որ նա բացէն կոխ յայտարարած է հոգաբարձութեանց ու թաղականութեանց ղեմ, աւելի ճիշդ քաջատրութեամբ, ազգին ղեմ (քանի որ անոնք ազգին ներկայացուցիչներն են): Եւ արեւուն կիսին գոցելով վարժարանները ի սէր ազգային մանկուոյն. (ազգին զաւակներին ալ շահագործուեցան. ալ բան մնաց):

Ըսինք թէ Ուսուցչական Միութիւնը իր անդամներուն ինքնազարգացման իբր միջոց մանկավարժական թերթի մը հրատարակումը որոշած էր, իսկապէս չարժեք այս ողորմելի ամսաթերթին վրայ խօսիլ, այնքան խեղճ ու կրակ բովանդակութիւն մը ունեցաւ այն: Այս օրակներ, ինչպէս կը սիրեն յորջործի գայն, ետդիւն մը եղաւ կարգ մը ուսուցչներուն մեղքերուն, բայց դժբաղդաբար այս վերամակը այնքան

փոքր ու թափսնձելի էր, որ անօրծալքերուն տակ պատասխանողներուն ոտքերը դուրս ելան եւ միւս կողմէն դատարկ գլուխները երեւցան եւ որ իր թափանցիկութեամբ ցոյց տուաւ իրմով ճառկուածներուն սեւ հոգիները, մանկավարժական կարողութիւնները եւ վերջապէս վարժապետական ոչ գնահատելի բոլոր առաւելութիւնները: Կարծենք թէ այս թերթիկը մի քանի մասնաւորներու դատը պաշտպանելու համար խեղճ ուսուցչներու յուժանորդն գերեզմանը եղաւ: Մանկավարժական թերթը ստացուած պահուն իսկ կը գրպանուէր, ունի պէտքը դորձածներու համար, եւ իրաւ ուրիշ օգուտ մը ակնկալել անկէ առնուազն միամտութիւն պիտի ըլլար:

ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— * —

Պատուարժան խմբագրութիւն «Իրաւունք» թերթի ՎԱՌՆԱ

Թերթիդ, թիւ 58 ին մէջ, «Տօպրի» ստորագրութեամբ գրութեան մը մէջ յարձակումներ կային Ուսուցչ. Միութեան: Եւ անոր անդամներէն պ. Գուլումեանի պէս:

Գործադիր մարմինս, հեռու քոյիւնիքներ ունենալու փափաքէն. այլ խեղաթիւրումներ ուղղելու համար, կուգայ յայտարարել թէ, իր ըրած քննութիւններովն ու պահանջած բացատրութիւններովն հաստատած է որ,

1. — Պ. Գուլումեան պատահաբար այցելելով Տօպրի, լսարան սարքած է իրենց ու շաղթութիւնը հրաւիրելու համար կրթական գործին վրայ, որը իրենց իսկ խոստովանութիւնով բոլորովին ինկած վիճակի մէջ է եղեր:

2. — Պ. Գուլումեան երբեք չէ խոստացած չէ պաշտօն ստանձնել Տօպրիի մէջ:

3. — Պ. Գուլումեան պէտք չէ ունեցած գաղտնապէս բանակցելու ոչ մէկ տեղի հետ, քանի որ, կանխապէս պայմանաւորուած չըլլալով ոչ մէկ զպրօքի համար, ազատ էր այդ մասին իր ընելիք քայլերուն մէջ:

գր հագիւ կային: Երբ հաց տանողները խոտերուն վրայ սփռեցին պանիրն ու հացը ամենքն ալ կարողով չարուեցան ու ճաշեցին: Ախ, զմայլելի էր տեսարանը... տեսնէ՞ք ինչ կարգապահութիւն կար անոնց մէջ: Զը կրցայ զիմանալ... «Ասոնք վատ մարդիկ ըլլալու չեն» ըսի ինքեմբն: Հետեւաբար իջաւ բարձր ժայռիցէն վար ու անոնց մօտենալ ուղեցի: Ոտքին Շ. ու կը գտնուէր սփափուցող: Ամենքն ալ ոտքի ելան ու հրացանին ղէպի իմ կողմի ուղղեցին: Եւ կեցայ: Ան առան ձայն մը առի որ կըսէր. «Բարեկամ ես, թէ թշնամի...»: Պատասխանեցի թէ «Քաջիւր մըն եմ...»: Այս խօսքիս վրայ թողուցին որ անոնց ջովն երթային:

— «Ինչ գործ ունիս այս լեռներու մէջ, հարցուց ինձի անոնց պետը:

— «Կը թափառէի, պատասխանեցի:

— «Զե՞ս վախճար:

— «Ուսկի՞ց...:

— «Սա լեռներէն... կամ թէ մենէ:

— «Լեռը կեանքիս աշխարհը եղած է... իսկ ձենէ չիմ վախճար, որովհետեւ մարդիկ էք... գաղաներ չէք:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

103

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

— * —

ՄԱՍԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

(Շար. նախորդ թիւէն)

Իրաւ ատենի բան մը կ'այ... — Ոչ: — Հապա: — Պատուակ. որպէսզի փճացուեն այդ մարդուն ամբողջ րոտանքը: — Զեք համար վտանդ մը չէ՞ք դու չակեր: — Եթէ ասանկ երթայ... նահանգիս կուտակալը մէկիկ մէկիկ քուրտ գեղապետներն ոչնչացուենու կաշխատի: — Ես բապ-պի՛մ... ինչու համար չեն թողար որ երկիրը խաղաղի: Ախ, սիրելի ծանփար պէ՛կա, ման եկայ ամեն կողմ... բայց արեւնէն, արցունք-

քէն ու աւերակներէն դատ բան մը չը տեսայ: Ինչ է այս... կը մտածեմ ինքեմբն: Եւ կըսեմ թէ՛ կառավարութիւնը մինչեւ ո՛ւր պիտի տանի այս վատ դրութիւնը... Երեսուցի չափազանց կը ցտիմ. է՛յ, դուք ինչ ուրոշած էք ընելու... չի՞ պիտի պաշտպանէք ինքեմբն:

— Ինչ կրնամ ընել: — Պէ՛տք է զգուշանալ: — Ախ, քաջիւր, աղէկ կըսէք... բայց ես չիմ կրնար վստահել անձ նաւորութիւններ գանել մեր ցեղապետներու մէջ: Անոնք անտես հացկատակ ու չորոքորդ մարդիկ են որ նշան մը եւ դրամական պարգեւ մը ստացան մի՛... ալ կուրանան ամեն բան: Դալով կեանքներն: Քոսիթէներուն, անոնց մէջ կան հաւատարիմ մարդիկ, սակայն անհար է որ իմ անկեղծութիւնս կարենամ ապացուցանել, որովհետեւ անոնք կը պզգան մենէ եւ թուրքերէն աւելի կատեն մեզ: Ասոր ալ պատճառը շատ արդարացի է. աւո՛րք բռնակալներու ղեմ կուրծք տալու պատրաստուեցան, ղէմներն քուրտ տերու խուժան մը տեսան: — Սիրելի ծանփար-պէ՛կա, ատով

այտակարգ յիշատակ մը արթնցողիք մէջ: Ասկից օր մը առաջ երկու կեսաւուրի հանդիպեցայ: Մտեցան ինձի ու հարցուցին ո՛վ ըլլալս: Պատասխանեցի թէ «Քաջիւր մըն եմ եւ ոչ մէկ ազգի չեմ պատկանիր... կը թափառեմ աշխարհքիս մէջ միայն արդարութիւնը տեսնելու համար...»: Այդ երկու կեսաւուրները հաց տուին ինձի ու հեռացան: Ես զարմացայ... ինչ վե՛ճ մարդասիրութիւն. եթէ ազգովս թուրք մը չէի, չէ՞ որ կրօնքովս դարձեալ իսլամ մըն էի: Ան ատեն հասկցայ թէ՛ անոնք մարդն ու բռնակալը մէկ չէին նկատուի:

— Մեր սահմաններուն մէջ տեսաք: — Այո՛: — Յետո՛յ: — Յետոյ հետաքրքրուեցայ ու անոնց ետեւէն գացի: — Ետեւունք գացի՞ք: — Ծիչդ է: — Մինչեւ ո՛ւր... — Մինչեւ լեռան մը ապառաժներու մէջ: Անոնք չը տեսան զիս: Ես քաշուեցայ բարձր քարի մը ետին ու դիտեցի խուժը մը կանաչ կտրիճ երկտաւարները: Թուով քոտնեւչորս հո-

4. - Պ. Գուլյուստան, մինչեւ օգոստոս 30 իր առաջարկած պայմաններու մասին պատասխանի սպասած է Տօպրիչի Հոգաբարձութեան. եւ այդ թուականէն վերջն է որ, պատասխան ստացած չլլալով, եւ անպաշտօն չը մնալու համար, Գիւրիպէն հեռագրաւ իրեն հղած առաջարկին հաւանութիւն տուած է:

Այս վերջին պարագաները կարելի է հաստատել զիմելով Տ. Մելքոն Դաւիթեանի, որ կ'անդամակցի Տօպրիչի Հոգաբարձութեան եւ թաղ. Խորհրդաւ, եւ հեռագիրներու թուականովն ու կնիքովը:

Գործադիր Մարմինս, այս իրողութիւնները հրապարակելով, կուզէ հաստատել թէ, «Տօպրիչի» ճշգուծութիւններով չէ որ կը քննադատէ պ. Գուլյուստանն ու Ուսուցչ. Միւսթիւնը:

Ուսուցչական Միութիւնը, քանիցս, իր օրկան «Ռաւիլիայ»ով յայտարարած է թէ չի խորհիր քննադատութիւններէ. բայց երբ քննադատութիւնները կուգան «Տօպրիչի»ին ըրած ձեւովը, ուր իրողութիւնները խեղաթիւրուած են, վարկաբեկելու եւ խճճելու յայտնի դիտաւորութիւնով, հասարակութեան կը թողունք այդտեսակ քննադատութիւններու արժէքին աստիճանաշարքը:

Յուսալով որ Զերթերթին մէջ տեղ մը կուտաք ներկային,

Կը մնամ յարգանքով
Պ. Հ. Ուսուցչ. Միութեան
Գործ. Մարմին վարիչ
Ս. Թ. Երէճեան
19/2 Սեպտ. 1907
Կնիքով (Կնիք)

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Այս ամսոյ վերջը պիտի սկսի դատաւարութիւնը այն յեղափոխականներուն, որոնք անցեալները ամեն հարկ եղած կարգադրութիւններէ ըրած էին պատերազմական պաշտօնեան ըսպաններու համար, եւ ոստիկանութեան

— «Նայէ՛... հրացաններ ունինք»
— «Ատոնք արդարութեան պաշտպանելու կոչուած են, ո՛չ թէ ֆաբրիկայի սպաններու»
«Պետք ժպտեցաւ Յարգեցիկ զիս ու խորին դառնութեամբ ըսին թէ՛ պարտաւորուած են ամենքն ալ թողուլ իրենց հայրենի տունը, սիրելիներն ու պատիւներն պաշտպանելու համար լեռները քաշուիլ»
— «Մենք ո՛չ մէկը վատութեան նպատակով կոչուած է այս նուիրական մեծ գործին, ըսաւ իրենց խանդավառ պետը. մենք ո՛չ մէկը դրամ չանելու եւ կամ թէ հարուստները կողոպտելու միտքով հարկադրուած է արիւն թափել. ամենեւին՝ անգնակառակը՝ մեր ամենուս արդար պահանջը միմիայն իրաւունքի պաշտպանութիւնն է զոր ոտնակոխ կրնէ թուրք կառավարութիւնը Ա՛խ, ֆաբրիկ, դուն շատ երկիրներ տեսած ես... շատ կառավարութիւններ ուսումնասիրած ես... կա՛յ ժողովուրդ մը՝ որ արեան գետերու մէջ ապրի...»
«Սիրտս ելաւ ու ակամայ արտասուեցի Այն վեհանաճութիւնը զոր տեսայ այդ բոլոր մը քաջերու մէջ, ու

թեան աջալրջութիւնը կրցած էր ի դերեւ հանել անոնց նպատակը: Ամբաստանեալներու մէջ կան երեք զինուորականներ, որոնք յանձն առած էին նախարարին օթօմայիլը օդը հանելը:

— Այս միջոցիս Ռուսիա ահագին պատրաստութիւններ կընէ վաւերիւթեղը ամրացնելու ծովեզերեայ նիւթաւորակի շուրջը ամրոցներ շինելու եւ Խաբարովսկիի մէջ վիթխարի զօրանոցներ կառուցանելու համար: Ասոնց շինութեանց համար որոշուած է 37 միլիոն ռուպլի ծախք:

Հետաքրքրական է գիտնալ թէ ճարտն պատեհ առիթ մը չպիտի ունենայ այս նորաչէն ամրութիւններն ալ գրաւելու, ինչպէս ըրաւ Բորթ Արթուրին:

— Օգոստոս ամսոյ մէջ միայն Բեթերսպուրկէ քաղաքներուն թիւը կը հասնի 400 հոգիի:

— Գուրիպէն երթալով կը տարածուի Վոլկայի երկարութեամբ շրջակայ քաղաքներու եւ գիւղերու մէջ: Այս գարշելի հիւանդութեանէն ամեն օր բաւական մարդ կը վարակուի, մեռնողներուն թիւն ալ քիչ չէ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վառնայի նահանգային կրթական տեսուչը (էնթէքթէօր) նոր պաշտօնագրով մը գեկուցած է տեղւոյս մեր Ազգ. վարժարանի հոգաբարձութեան թէ ուսուցիչները, բացի մէկէն, օրէնքին համապատասխան վկայականներ չունենալնուն եւ պուլկարահպատակ չըլլալնուն համար պէտք է պաշտօնէ դադարին: Հոգաբարձութիւնը այդեկութի առթիւ եւ այս պատճառաւ վարժարանը չարաթի մը չափ փակել որոշեց:

րոնք իրենց պատիւը ու երկրին արդարութիւնը պահպանելու համար հողապատանելու հարկադրուած էին, հոգիս համակց ու ես աղօթք մը միմիջեւով հեռացայ:
— Օր մը առաջ ըսիք, անանկ չէ՞, ընդհանրեց ծանփար պէկներքին խոնովքէ մը թելադրուած:
— Այո՛, պատասխանեց Սեպակապետը:
— Ա՛խ, ուրեմն ճիշդ է... կառավարութիւնը տեղեկագիր մը խնդրած է ինէ՛ թէ սահմաններու մէջ հայ քոմիթաներ կա՞ն թէ անոնցմէ մէկը տեսնուած է եւ թէ անկարգութիւններ տեղի ունեցած են... Ես չուարեմ էի ու չէի գիտեր ի՞նչ պատասխան տալու: Կը կարծէի թէ կուտակալ Թահիր փաշայի մէկ խաղն էր այդ... Բայց դուք ամեն բան լուսաբանեցիք: Հիմակ որոշապէս կը յայտնուի թէ այդ մարդիկ մատնուած են... կամ թէ ուրիշ կողմերէ եկած ատեն լրտեսուած են... վերջապէս դաւադրութիւն մը կալ անոնց շուրջը:
— Եթէ այդ այդպէս է, դուք ի՞նչ կերպով պիտի վերաբերուիք... ձեր վեհանաճ տրամադրութիւնն ի՞նչ պիտի

Տեղւոյս հայ հասարակութիւնը եռանդագին պէտք է համախմբուի հոգաբարձութեան շուրջ, աշխատելու համար Էնթէքթէօրի անողոք ընթացքին մեղմացում մը ձեռք բերել:

— «Լուսաբեր» կը գրէ թէ Ազգ. քանդակահար հասնող հայերը կառավարական արտակարգ խնդրութեան կենթարկուին, նոյն իսկ շատերուն լուսանկարները առնելու ուղուած է:

— Պուլկարիոյ հովիւ նշանակուած Տ. Եղնիկ Ժ. Վ. Գալիպքեան վերջերս Բաղէշի առաջնորդ ընտրուած ըլլալով մերժեց այդ վիճակի տուաշնորդութիւնը եւ նախամեծար համարեց պուլկարահայոց անուանական հովիւ մնալ, անշուշտ Պօլսոյ մէջ կենալու պայմանաւ: Բաղէշցիք ալ մտիպուեցան առայժմ առաջնորդ պահով մը մնալ:

— Էջմիածնայ Գեորգեան ձեւարանի Ա. և Բ. դասարանները փակուած են խնայողութեան համար: Նոր աշակերտ ալ չպիտի ընդունուի այլեւս այս տարեշրջանին:

— Այս տարի Արմաշի ուխտաւորներէն 750 ոսկի հասոյթ գոյացեր է:

— Վանայ Առաջն. Տեղապահ Տ. Ներսէս Ծ. Վ. Խաչատրեան հրաժարական զրկած է բայց Պատրիարքարանը հրամայած է շարունակել իր պաշտօնը:

— Հին Նախիջեւանէն գրուած նամակէ մը կը տեղեկանանք որ Ճուլֆայի նոր երկաթուղին շինող գերմանացի Անտոն Փոստանը կարմիր վանք այցելելով երբ կը տեսնէ վանքին խարխուլ վիճակը ու կը լսէ վանահայրէն որ վանքը կարօտ վիճակի մէջ է, իւր մարդասիրական զգացումէ շարժուած կուզէ մեր աղգային եկե-

տի ըլլալ այդ բոլոր մը երիտասարդներու նկատմամբ:
— Մտիկ ըրէ՛ք, բարեկամս, դուք գիտէք թէ երգում երաժշտում եւ նուիրական նիքեանիս վրայ որ ձեռք բան մը չը ծածկեմ ա՛յն խոր համոզմունքով՝ թէ դուք ա՛յն վատ ու գիմեակաւոր մարդերէն չէք եւ իմ սեփական ներքաւեր ստրբելու չէք եկած: Ի՛նչ մը առաջ ըսի թէ իմ ցեղապետական իրաւունքներս պահպանելու համար ամեն չորքորդութիւն, ամեն հաճոյակատարութիւն զոր պիտի բնեմ թուրք կառավարութեան, ատոնք ամենքն ալ ուշ կամ կանուխ ապարդիւն պիտի ըլլան ու ես աւագի վրայ հիմնուած պիտի մնամ: Արդ, ցեղապետական իրաւունքներս կրնամ պահպանել, երբ ազատ ըլլամ եւ իշխելու իրաւորութիւնս գտնեմ: Եւ ատկա կըլլայ, եթէ ներքին ուժով մը միանամ կեանքով ինքնորոշուի Անոնք՝ իրենց պատիւը պահպանելու համար արեւը կը թափեն, թո՛ղ մենք ալ մեր իրաւունքին տէրը դառնալու նպատակով կուրծքերնիս բանանք: Ես այնպէս չեմ մտածեր, որպէս կը մտածեն մեր յարակից ցեղապետներէն ոմանք... իմ աչքս

զեցւոյ բարիք մը ընել: Հետեւաբար իր անձնականէն 10—12 հազար ռուպլի ծախսելով կը նորոգէ վանքը: Ասկէ զատ վանքին սենեակները կը պտտի, կը տեսնէ որ անոնք ալ նորոգութեան կը կարօտին, ուստի անոնց համար ալ կը խոստանայ յատկացընել 10 հազար ռուպլի ծախս իր քսակէն:

Ի՛նչ մեծ բարեգործութիւն օտարի մը կողմանէ:

ՌՈՒՍՃՈՒԳԻ ԱԶԳԱՅԻՆԱՄՈՐԸ

Հանգուցեալ Տիկին Թագուհի Յ. Փափաղեանի յուզարկաւորութեան փոխան ծաղկեպսակի տեղւոյս Աղքատախնամ ընկերութիւնը հետեւեալ նուիրատուութիւնները ստացաւ:

Տկ. Բրաթիւն Աղասեանէ 20 ֆր.
Տ. Սարգիս Գուլյուստանէ 60 »
Տ. Վաղարշակ Գուլյուստանէ 40 »
Նաեւ Տեառ Մանուկ Գուլյուստան Մանչէսթրէն քաղաք ժամանելուն հաւ. Խաչի Տաղաւարի առթիւ 125 ֆր. նուիրեց ընկերութեանս: Յանուն բոլոր աղքատաց մեր շնորհակալքն կը յայտնեմք հրապարակաւ վերոյիշեալ ազգայնոց:

Վարչ. Աղքատ. Ընկ.
Իրաւունքի
(Կնիք)

ԾՄԻՍԻԻ ԳԻՐԳԵՐ

ՓՈՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » [433 էջ] 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԿԱՎԱՆ երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութեան առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅԻՆԵՐԻ ԶՈՋՆԵՐ Պատկեր մը Ճաճկահայաստանի իրական կեանքէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմե՛ք ՎԱՌՆԱ «Իրաւունք» ի խմբագրութեան

ներկայէն աւելի՛ ապագային յարած եմ ու կը տեսնեմ թէ մեր ապագայի հորիզոնը շատ մոայլ, շատ աղիւլալից ու շատ փոթորկալոյց հորիզոն մըն է... Ե՛հ, քանի որ բաղդին բերմամբ ատանկ խուճ մը իմ սահմաններուս մէջ ապաստանած է, եւ պիտի ջանամ անկեղծ մտերմութիւն մը հաստատել անոնց հետ եւ ձեռքէս եկած օգնութիւնն ալ չը խնայել: Միայն թէ...

Ծանփար պէկ չ'կ'ըցաւ չարունակել... այդ բառը խղիւղեցաւ կոկորդին մէջ ու յոեց:

— Ինչո՞ւ չը շարունակեցիք, առարկեց Աւագակապետը:

— Ըսել կուզէի թէ՛ միմիջեւ ճահ վար պէկ, ինչպէ՞ս ներկայանալու է այդ խուճին:

(Շարունակելի)



ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԷՐԶՐՈՒՄՏԱ անվաւ աղբը տըր-
էնալի բէք հիտտէթլէնմիշ տիր
նաֆագանըն բահալանմասընտան
տօլալը, վէրկիլէրի էօտէմէք իս-
թէմէյօր:

Վան վէ Խարբերթ վիւայթ-
լէրին անվալը տախի մէննունի-
յէթ պախշ տէկիլ տիր:

— ՊԱԹՈՒՄՏԱ գաթլ օլընան
սապըգ Վան վալիսի Ալի պէյին
ճէսէտի Սթանպօլա նագլ իշին
պահարաւտուպ, ասքէրիյէ իհ-
թիրամթը իլէ ֆրանսըզ վա-
բօրընա գօնուլմուշ տըր: Պա-
թոււտաքի պիւթին գօնսօլոս-
լար վէ բէք չօգ զէվաթ ճէնագէ
ալալընա հաղըր պուլունմուշլար
տըր:

— Աւստրիա վէ Բուսիա տէվ-
լէթլէրի թարաֆընտան Աթինա,
Սօֆիա վէ Պէլկրատ հիւքիւմէթ-
լէրինէ վէրիլէն նօթալար: Պապը
Ալիտէ խօշնուտիյէթ հասըլ իթ-
տի զիրա իշպու նօթալարլէ Մա-
քէթոնիայ չէթալար կէչմէսի-
նին գաթիէն մէննինի թալէպ
իթտիլէր: պէօյիւկ տէվլէթլէրին
էլէ ալաղլարը մուէսսիթ թէտ-
պիլլէր սայէսինտէ Մաքէթո-
նիատա րոււ, սըրպ վէ պուլկար
չէթալար կէօրիւմէյէճէք վէ
սուլհ ու ասայիշ հասըլ օլաճադ
զանն օլընիյօր:

— ԵՌՈՒՆԱՆ ԸՆԵԱՆՆՐ ԷՆՆԱՍՐՆՈՒՄ
գօմիթէ աղասը վէ թէչվիգէիսի
օլմագ թէօհմէթի իլէ՝ Սուլթան
Մահմուտըն էմրի իւզլէ 1821տէ
Սթանպօլտա ասըլմըշ օլան կրէ-
կորիոս Ե. րոււ բաթրիքին րէս-
մինի շիմտիքի բաթրիգ ֆէնէր-
տէքի պէօյիւկ քիլիսէնին պիր
թարաֆընա աստըրմըշ օլմաղլէ,
խընճա խընճ էնալի թէվաղղուլա
գօշմագտա վէ թապիթի թիւրք
հիւքիւմէթինտէն պիր գաթ տա-
հա նէֆրէթ իթմէքտէ օլտըղըն-
տան, Պապը Ալի վէ եըլտըզ մէզ-
րիւր րէսիմին օրթատան գալտը-
րլմասընը բաթրիգտէն թալէպ
թիթիլէր: Եօաքիմ բաթրիգ իսէ
մ. թէվլէթա կրիկորիոս Ե. ի ա-
զիլլէր սընֆընա կէչմիշ օլտը-
ղընը վէ պու քիլիսէյէ ալիտ
պիր մէսէլէ օլմաղլէ հիւքիւմէ-
թին միւտախէլէյէ սէլահիյէթի
օլմատըղը ճէվապէն պիւտիթի
ֆագաթ Սուլթան թէհէմմիւլ ի-
տէմէյուկ, հէր հալտէ մէզքիւր
րէսիմի գալտըրմասընը Բաթրիգէ
էմր էլլէտի: Բաթրիգ իսէ իթա-
թա քէնտիսինի մէճպուր կէօրէ-
րէք, գալաըրմագ վատ իթտի:

— ՍՕՆ հաֆթալար զարֆընտա
էվրոքա հիւքիւմտարլարըն կէօ-
րիւմէլէրի, քէզա րոււ խարի-
ճիյէ նաղըրընըն վէ կրան տիւք
վալտիմիթին վիէննատա Աւստ-
րիա տիւրմաթլարը իլէ կիզլի
միւլագաթլարը եըլտըզտա վէ
Պապը Ալիտէ րահաթսըղըգ հա-

սըլ իթմիշ տիր: Իշպու միւլա-
գաթլարլէ թիւրքիա վէ պախու-
սուս Մաքէթոնիա իշին գաթի
գարարլար վէրիլմէքտէ օլտըղը
թէհէմին օլունիյօր:

— ՄԱԲԷԹՈՒՆԱՆԸՆ Ֆլօրինա
գաղասընտաքի թիւրք ասքէրլէ-
րի ալըգ ալմատըզլարը իշին
իսթիլալ գալտըրտըլար:

— ՄԱԲԷԹՈՒՆԱՆՍԱ Նիէկօլան
քէօյիւ 200 քիշիլիք պիր պուլ-
կար չէթասընտան պասըլտը:
23 խանէ եագտըլար, 10 գարը
վէ 3 էրքէկ գաթլ իթտիլէր: Պու
քէօյ րոււ բաթրիգհանէսինէ
մէնսուպ ըտը:

ՏԱԽԻԼԻՅԷ

ՊՈՒԼԿԱՐԻԱՏԱՆ թաճիզլիք կէօս-
թէրէրէք Եռնանիստանա հիճ-
րէթ իտէն Բոււլար օրատա սէ-
ֆիլ գալմագտա օլտըզլարը սէ-
պէպի իլէ կէրի կէլմէկէ պաշ-
լամըշլար տըր: Եռնան հիւքիւ-
մէթի եալընըզ Ահօլուտան կի-
տէն մուհաճիլլէրէ խանէ վէ
թօբրագ թէտաիթ իթմէքտէ
տիր: Վարնատան, Պուլկաղտան
վէ սայիթ մահէլլէրտէն կիթմիշ
օլան ֆաքիլլէր իշիլ վէ եար-
տըմսըզ գալմըշ տըրլար: քէզա
իսթէտիքլէրի մահէլլտէ սաքին
օլմայա միւսատէ օլունմայօր:
պուլկարա եալընըզ պիր գաշ ալ
էքմէք բարասը վէրիլմիշ իսէտէ,
շիմտի օ՛ տէ քէսիլմիշ տիր:

— ԱԻՍՏՐԻԱ վէ Բուսիա տէվ-
լէթլէրի թարաֆընտան պուլ-
կար հիւքիւմէթինէ վէրիլէն նօ-
թայա գուվլէթ վէրմէք իշին
էվլէլէրի կիւն Սօֆիատաքի ին-
կիլիլ, Ալման վէ իթալիա գօն-
սօլոսլարը խարիճիյէ նաղըրը Մ.
Տ. Սթանսիպա կիտուպ կէօրիւշ-
տիլէր: Սօֆիա կաղէթալարը
պէօյիւկ տէվլէթլէրին չու իթի-
լաֆընտան մէննունիյէթ պէյան
իթմէքտէ տիրլէր: Էվլէլտէն
պէրու Պուլկարիա «Մաքէթոնիա
Մաքէթոնլարա մէպտէսինէ խա-
տիմ պուլընտըղընտան, շիմտի
պէօյիւկ տէվլէթլէր տախի ալըն
մագսէտլէ Մաքէթոնիանըն իս-
լահաթընը տէրէօհտէ իթտիքլէ-
րին պիւտիթիքլէրինտէն թա-
պիթ Պուլկարլար մէննուն գալա-
ճաղլար:

— ՇԷՀՐԻՄԻՉ կէօմրիկինտէն
30,000 սանտըգ կազ՝ կէօմրիկ
էօտէմէքսիլին՝ գաշըրըլմըշ օլ-
տըղը, վէ պունա միւթէճասըր օ-
լան իքի պուլկարլարտան պիրի
գաշմըշ վէ տիկէրի թուլթուլմուշ
օլտըղը կէչէն հաֆթա շայի օլ-
տու իսէտէ, Եէնի մաթպաա
նիզամնամէսի հէր պիր իշիտի-
լէնի եաղմայա միւսատէ իթմէ-
տիկինտէն պիլ սիւքիւտ գալմըշ
ըտըք: շիմտի իշ աշիքեարէ
վուրմուշ տըր:

ԲՈՒՍԻԱ

ՏՈՒՄԱ իշին իքիճի սընքի
ինթիսապաթտան շիմտիյէ գա-
տար րէյ գաղանանլար 67 մօտէրէ
42 հիւքիւմէթ թարաֆը եանի
սաղ գօլ, 33 սօլ գօլ, 2 պիթա-
րաֆ:

— ՆՕՊԷԼ ֆապրիգանըն տի-
րէթթօրը վէ պիր մէմուր Պա-
թոււտա գաթլ օլունտուլար:

— Պիր Եօլը թըրէնի օրման
Եօլընտան կէչէր իքէն պիր չէ-
թա թարաֆընտան թիւքէնկ
տարպէլէրինէ թաթուլտու:

Թրէնտէքի ժանտարմլար չէ-
թայը կէրի սիւրտիլէր: Չէթա-
նըն պըրագտըղը պիր ուֆտգ
պանտէրա իւզէրինտէ եաղըլը
ըտը: «Ենաշաըն ճուհուրիյէթ»
Պիր գաշ քիշի թէվգըֆ օլուն-
տու:

ԱՃԷՄԻՍՏԱՆ

ԹԷՀՐԱՆՏԱ 57 բրէնսլէր վէ
ասըլպատէլէր Մէճլիսի Մէպու-
սան սալօնընա կիրուպ, Գանուըն
էսասիյէ սատըգ գալմագ իշին
Եէմին իթտիլէր:

— ԱՃԱՆՍ ՎԷՍԹԻԿԻՆ իշա-
րը իւզրէ, թիւրք ասքէրլէրի
Սօման վէ Պարտիսպի ճիվարընը
իշլալ իթտիքտէն սօնրա, Թէչ-
տիլպէյ սէվթիլի վէ Ուշնու գա-
սապասընը զապլթ իթմիլլէր: Տի-
կէր պիր թիւրք թապուրը Տիւ-
ման իւզէրինէ կիթմէքտէ իմիշ:
Թիւրքլէր Ուշնուլը զապլթ իթ-
մէլէրինտէ՝ Ուրմիա իլէ թէլէկ-
րաֆ մուխապէրաթը քէսիլէճէք
տիր:

— ԹԻԻԻԲ ասքէրինին Աճէ-
միստան տախիլինէ իլէրլէմէկէ
էմր ալտըղընը Մէճլիս տուլմուշ
օլտըղընտան, գարար վէրտի քի-
հիւքիւմէթ տէր հալ սինօրա
պիր օրտու Եօլասըն: պուլնուն
իշին պիր միլիօն ֆր. մէսարիֆ
թախսիս իթտի:

— ԹԷՀՐԱՆՏԱԲԻ ԹԻԻԻԲ Էլլիսի
քէնտիսինէ գարըն աճէմ էնալի-
նին նիւմայիշաթընտան թաճիլ
օլարագ, Սթանպօլա կէրի չաղը-
րըլմասընը Պապը Ալիտէն րէճա
իթտի:

— Ա. ՎԷՍԹԻԿԻՆ վէրտիկի
սօն հալաւտիսէ նաղարէն, թիւրք
լէր Աօքէրապատը զտպլթ իթ-
միլլէր: պու գասապա Ուրմիայա
20 վէսթ տիր: Ինկիլիլ գօնսօ-
լոսը Ուրմիատան Մալանայա
կիթմիշ, օրատա Պիթլիս վալիմի
թաշիթ բաշա իլէ կէօրիւմէք ի-
շին:

Հ Ի Ն Տ Ի Ս Տ Ա Ն

ՆԻՏԻՍՏԱՆՏԱ Ելլիլլէրտէ ին-
կիլիլլէրէ գարըն հարէքէթ Եի-
նէ տրթմագտա տըր: Էվլէլէրի
կիւն կալկաթտան ալընան պիր
թէլէկրաֆ տէյօր: «Տիւն կիճէ
պուրատա պէօյիւկ գարընըլըգ-
լար գուհուրա կէլտի: Էնալինին
ճահիլ գըմը բօլիսլէր վէ Էվրո-

բալըլար իւզէրինէ հիւճոււմ իթ-
տի: Ասըլ Եէրլի բօլիսլէրտէն
չօղլարը իսթիլալընարա պիր-
լէշմիշ իտիլէր: բօլիսլէրտէն 40
քիշի տէրտէսթլէ թէվգըֆ օլուն-
տուլար, ֆագաթ ատի էնալիտէն
քիմսէ թուլթուլմատը:

ԹԱՏՐՈՆ ԲՐՕՃԷՔ

Վաղը Երեկոյ «ԲՐՕՃԷՔ» թատ-
րոնի մէջ տեղի պիտի ունենայ
Երրորդ ներկայացումը Տիկին
Սիրանուշի կազմած թատերական
ընտիր խմբին՝ որ պիտի ներ-
կայացնէ՝

Զ Ա Ի Ա Կ

ողբերգութիւն 4 արարուած

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ԶԱՆԻՐԷ			
ՊՈՒՂՏԱՅ			
Վազօն	100 քիւլօ	21.	-22.10
Արապա	57-62 լիպ.	14.40-	17.20
ԱՐԲԱ			
Վազօն	100 քիւլօ	15.	-15.20
Արապա	45-52 լիպ.	8.40-	9.20
ԵՌՈՒՆԱՆ արապա	33-36 լիպ.	6.40-	6.80
»	100 քիւլօ	14.20-	14.40
ԶԱՎՏԱՐ արապա	52-57 լիպ.	12.60-	13.
ՖԱՍՈՒԼԵԱ	100 քիւլ.	20.	-28.
ՏԱՐԸ արապա		8.	-8. 60
ԲՕԼՕՉ արապա	55-60 լիպ.	15.	-50.16
ՄԻՍԻՐ		9-	10.60
Կիւնտէ վազօն	20-25 վէ	250-	300
արապա կէլմէքտէ.	վազօն մուամէ-		
լէսի նաթօլէօն	20 ֆր.	արապա մու-	
ամէլէսի քէզա նաթօլէօն	20.		
ՊԱԳԱԼԻՅԷ			
Վարնա քիւստաթնտա պագալիլէ			
մալլէրին պու կիւնքի ֆիլպլթ.			
թուլն ֆրանք իլէ:			
ԳԱՀՎԷ		1.95-	2.20
ՇԷՔԷՐ նէմցէ		90.	
ՇԷՔԷՐ քէսմէլ	սանտըգ	44.50	
ԲԻՐԻՆՉ ձէնօլա չուվալը		45.50	
»	Ֆիլպլթ	»	Եօգ
»	Ինկիլիլ	»	33 1/2
Բիգօն	»	50.	
ԿԱԶ Սանտըղը		10.80	
ԶԷՅԹԻՆ Եաղը քիւլօ		1.30-	1.35
ԳՈՒՐՈՒ Եւզլիւմ		40.	
Եռմուրթա	100	ատէթի	6-80

ՄԱՍՆԱՆՈՐ ԴԱՍԵՐ

Տ. Հմայեակ Խուշպուլեան կը
փափաքի մասնաւոր դասեր ըս-
տանձնել հայերէնի և ֆրանսե-
րէնի: Փափաքողները ուղղակի ի-
րեն դիմելու են:

Издатель: Д-ръ М. Торосианъ

печатня Д. Тодоровъ С-во — Варна

